ժամանակս իշխանութեան իւրոյ յուրախութիւն և 'ի մը-
խիթարութիւն հաւատացեալ հօտին, եւ հասեալ 'ի բարե-
ւոք ծերութիւն հանդեաւ սրբութեամբ և խաղաղութեամբ
'ի Քրիստոս (417), եւ կալաւ զառաջնորդութիւն Երուսա-
ղէմի Պրայիլիոս որ պատրեալ պատ 'ի պատ բանից Պե-
ղագիոսի՝ գրեաց թուղթ ընծայութեան վասն նորա առ
հայրապետն Հռոմայ Զոսիմոս։

Մովսէս Կաղանկայտուացի յառաջ բերէ 'ի պատմութեան
իւրում վասն սրբոյն Մեսրովպայ վարդապետին, թէ յետ
գիւտի գրոյն Հայոց, որ եղեւ յամի 406, և առնլոյ զնշա-
նագիրս նաեւ Վրաց և Աղվանից, գնացեալ իցէ աշակեր-
տաքն հանդերձ յուխտ յԵրուսաղէմ, եւ դարձ արարեալ
անտի բերելով խաչ արծաթեղէն, յորում կայր ասէ,
մասն ինչ 'ի խաչափայտէն Քրիստոսի, եւ մտեալ 'ի դա-
ւառն Ուտի՝ բնակին յաւանն Գիս։ Գէր+ Բ. Եր+ 190։
Եւ դարձեալ յաւելու անդ թէ՝ զկնի վախճանի սրբոյն
Մաշտոցի, աշակերտաքն նորին որ յԱղուանս, զրկեալ 'ի
հոգեւոր մխիթարութենէ հովուաց՝ խորհրդով դիմեալ ի-
ցեն յԵրուսաղէմ և բերեալ անտի քահանայս ոսկեթել և
արծաթեղէն սպասուք 'ի կարգել հովիւս աշխարհին իւր-
եանց։ և թէ նոյն քահանայք յետոյ անկեալ իցեն 'ի սուր,
և սպասքն մատնեալ 'ի ձեռս թշնամեաց։

Արդ՝ Մովսէս Խորենացի աշակերտ եւ ժամանակակից
երանելոյն, որ զամենայն հանդամանս գիւտի գրոյն Հայոց
'ի գրի եհար, չ'ասէ ինչ վասն գնալոյ նորին յԵրուսաղէմ,
որպէս յայտնապէս գրեաց զուղեւորութենէ իւրմէ հա-
սանելն 'ի Պաղեստին և մնալն աւուրս ինչ յԵրուսաղէմ։
Նոյնպէս և սքանչելին Կորիւն, որ զբովանդակ պատմու-
թիւնս վարուց Սրբոյն 'ի գիր արձանացոյց, չ'յիշատակէ
զայդպիսի ինչ, և այլ տոհմային Պատմիչք լռեն վասն այդր,
և յաղագս Գիւտի գրոյն 'ի բազում տեղիս թափառեցաւ
երանելին, այլ 'ի նոսա եւս չ'յիշի անուանդ Երուսաղէմ,
թողթէ յետ Գիւտի գրոյն ասէ Մովսէս. ուստի բանք կա-
ղանկայտուացւոյն անհաւանական են և ընդ կասկածանաք-
զի յետ Գիւտի գրոյն՝ անկարելի էր երանելոյն մեկնիլ
յաշխարհէն Հայոց, զի բացեալ էր առաջի նորա դուռն
բազմադիմի երկանց և աշխատութեանց 'ի լուսաւորութիւն